

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 4

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 3-ԻՆ  
ԺԱՄԸ 15:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ԵՐՐՈՐԴ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

### քաղ. Երևան

### Մասնակցում էին՝

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Տ. Դավթյան	ՀՀ ֆինանսների նախարար
Վ. Վարդանյան	ՀՀ քաղաքաշինության նախարար
Մ. Մնացականյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Դ. Մարգարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետ տեղակալ
Ա. Ղազարյան	Հայ ընդհանուր բարեգործական միության հայաստանյան ներկայացուցչության տնօրեն
Ա. Վարդանյան	«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն
Ա. Կիրակոսյան	ՀՄՆՀ-ի գործադիր տնօրեն
Կ. Մարգարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության պետ
Ռ. Անտոնյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության գլխավոր մասնագետ

Ա. Պողոսյան

ՀՄՆՀ-ի վերահսկման և գնահատման բաժնի վարիչ (նիստի քարտուղար)

1. ՀՄՆՀ-ի գործադիր գրասենյակի հաշվետվությունը 2009 թվականի ընթացքում  
ծավալած գործունեության մասին

---

( Ա. Կիրակոսյան, Տ. Սարգսյան)

**1. Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՄՆՀ-ի գործադիր տնօրեն Ա. Կիրակոսյանը`**  
հակիրճ զեկուցելով ՀՄՆՀ-ի գործադիր գրասենյակի 2009 թվականի տարեկան գործունեության  
մասին: Նա տվյալներ հաղորդեց 2009 թվականի ընթացքում համայնքներից ստացված  
ծրագրերի, կնքված պայմանագրերի, իրականացված ծրագրերի և կատարված ծախսերի  
վերաբերյալ: Հիմնադրամի գործադիր գրասենյակը հաշվետու ժամանակաշրջանում  
հանրապետության գյուղական և քաղաքային համայնքներից ստացել է 50 ծրագրի առաջարկ,  
որոնք ՀՄՆՀ-ի ընթացակարգերի համաձայն ենթարկվել են փորձաքննության: Այդ համայնք-  
ներում կազմակերպվել են ժողովներ, որոնց մասնակցել է մոտավորապես 7800 մարդ: Ժողովների  
արդյունքներով փորձաքննության երկրորդ փուլ է փոխանցվել 50 ծրագիր: Տարվա ընթացքում  
հիմնադրամը համաձայնագրեր է կնքել 57 համայնքի հետ` ծրագրերի իրականացման  
վերաբերյալ: 2009 թվականի ընթացքում ծրագրերի շինարարական աշխատանքների  
կատարման համար կապալառու կազմակերպության, մրցույթի կամ աճուրդի եղանակով,  
ընտրության արդյունքում կնքվել է 71 պայմանագիր` 3.55 մլրդ դրամի կամ շուրջ 9.64 մլն ԱՄՆ-  
ի դոլար ընդհանուր արժեքով: Հաշվետու տարվա ընթացքում համայնքներում իրականացվող  
ծրագրերից 61-ում ավարտվել են շինարարական աշխատանքները, որոնց ընդհանուր արժեքը  
շուրջ 3.17 մլրդ դրամ է կամ մոտավորապես 9.6 մլն ԱՄՆ-ի դոլար: Ծրագրերի շահառուները  
կազմում են մոտավորապես 288 հազ. մարդ, իսկ մի շահառուին ընկնող միջին արժեքը կազմել

է 11.0 հազ. դրամ կամ 33.2 ԱՄՆ-ի դոլար: Տարեվերջին շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ էին հիմնադրամի 41 ծրագրում: Զեկուցողը հարկ համարեց ընդգծել, որ հաշվետու տարվա ընթացքում ստեղծվել է շուրջ 119.4 հազար մարդ\*օր աշխատատեղ, որի 99 տոկոսը՝ շինարարության ոլորտում:

ՀՄՆՀ-ի գործադիր տնօրեն Ա. Կիրակոսյանը նշեց նաև, որ հաշվետու տարվա վերջին կատարվել են աշխատանքներ ՀՄՆՀ-3 ծրագրի շրջանակներում 2-րդ լրացուցիչ ֆինանսավորման ստացման նախապատրաստման ուղղությամբ: 2010 թվականի փետրվարի 25-ին Համաշխարհային Բանկի տնօրենների խորհուրդը հաստատեց ՀՄՆՀ-3 ծրագրի համար երկրորդ լրացուցիչ վարկային ֆինանսավորման հատկացումը, որը կազմում է 7.0 մլն ԱՄՆ-ի դոլար: Այն ուղղված է ՀՄՆՀ-3-ի Համայնքային ներդրումների բաղադրիչի ընդլայնմանը՝ նպատակ ունենալով աշխատանք ու լրացուցիչ եկամուտ տրամադրել համայնքների անդամներին և ընդլայնել ենթակառուցվածքների և ծառայությունների ծածկույթն առավել կարիքավոր համայնքներում: Լրացուցիչ ֆինանսավորմամբ շուրջ 35 ծրագիր կիրականացվի տարբեր մարզերի համայնքներում, սակայն այս ֆինանսավորման շրջանակներից կբացառվեն Երևան քաղաքը և մարզկենտրոնները, իսկ միջոցները հիմնականում կուղղվեն քարտեզագրման և պրոֆիլավորման հետազոտության արդյունքում որպես խոցելի դասակարգված համայնքներին:

**2. ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար Ա. Գևորգյանը** ներկայացնեց իր դիտողությունը հաշվետվության վերաբերյալ, այն է, որ նշված քաղաքային համայնքների թիվը գերազանցում է վարչատարածքային բաժանմամբ սահմանված քաղաքների թվին:

ՀՄՆՀ-ի գործադիր տնօրեն Ա. Կիրակոսյանը դա բացատրեց նրանով, որ հիմնադրամի Ղեկավար ձեռնարկով սահմանված համայնք հասկացությունը ոչ բոլոր դեպքերում է համընկնում վարչատարածքային բաժանման սահմանման հետ, որպես օրինակ նշելով, որ քաղաքներում յուրաքանչյուր դպրոցի շահառուները պայմանականորեն համարվում են որպես մեկ համայնք:

**3. Երևանի քաղաքապետի տեղակալ Կ.Արեյանը**, նշելով ՀՄՆՀ-ի ունեցած մեծ դերը հատկապես երևանյան դպրոցների բարեկարգման և ջեռուցման գործում, ներկայացրեց Երևան քաղաքում նախադպրոցական հիմնարկների շինությունների անմխիթար վիճակը (վերանորոգման և ջեռուցման մասով) և այդ կապակցությամբ առաջարկեց, որպեսզի 2-րդ ֆինանսավորման շրջանակներում ընդգրկվի նաև երևանյան նախադպրոցական հիմնարկների ջեռուցման հարցը, (ընդհանուր 160 նախադպրոցական հիմնարկից միայն 60-ում է ջեռուցման հարց լուծված):

ՀՄՆՀ-ի գործադիր տնօրեն Ա.Կիրակոսյանը պատասխանեց, որ բանակացությունների փուլն ավարտված է, և որևէ տարբերակ չկա այդ խնդրին անդրադառնալ, վերջինս կքննարկվի լրացուցիչ այլ ֆինանսավորման դեպքում:

#### **4. Քննարկումներից հետո որոշվեց՝**

**1) հաստատել** ՀՄՆՀ-3 ծրագրի գործադիր գրասենյակի հաշվետվությունը 2009 թվականի տարեկան գործունեության մասին.

**2) հանձնարարել** ՀՄՆՀ-ի գործադիր տնօրեն Ա. Կիրակոսյանին՝ հիմնադրամի ծրագրերին առնչվող ցանկացած փոփոխություն կատարել միայն ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի (խորհրդի նախագահ) համաձայնությամբ:

2. ՀՄՆՀ-ի հիմնադրամի 2010 թվականի պլանների, բյուջեի և հաստիքացուցակի հաստատման մասին

-----  
--  
( Ա.Կիրակոսյան, Տ. Սարգսյան)

**1. Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՄՆՀ-ի գործադիր տնօրեն Ա. Կիրակոսյանը՝** նշելով, որ հիմնադրամի 2010 թվականի պլանները (ըստ ծախսերի կատեգորիաների), բյուջեն և հաստիքացուցակը համաձայնեցված են ՀՀ ֆինանսների նախարարության հետ: Նա նշեց, որ, ըստ պլանների, հիմնական վարկի գծով նախատեսված է իրականացնել 3.2 մլն ԱՄՆ-ի դոլարի չափով

աշխատանքներ, որից՝ 2.0 մլն ԱՄՆ-ի դոլար կկազմեն շինարարական աշխատանքները, իսկ առաջին լրացուցիչ ֆինանսավորման գծով նախատեսված է իրականացնել մոտավորապես 2.76 մլն ԱՄՆ-ի դոլարի չափով աշխատանքներ, որից՝ 2.5 մլն ԱՄՆ-ի դոլարը կկազմեն շինարարական աշխատանքները:

Նշեց նաև, որ ծրագիրն անշուշտ կգերակատարվի, մասնավորապես, շինարարական աշխատանքների ոլորտում՝ հիմնական վարկի շրջանակներում կազմելով 3.2 մլն ԱՄՆ-ի դոլար, իսկ լրացուցիչ ֆինանսավորման գծով՝ 3.3 մլն ԱՄՆ-ի դոլար: Գերակատարում կլինի նաև գույքի մատակարարման գծով՝ համապատասխանաբար կազմելով 280.0 հազ. ԱՄՆ-ի դոլար՝ հիմնական վարկի գծով և 400.0 հազ. ԱՄՆ-ի դոլար՝ առաջին լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում: Գերակատարման պատճառով կառաջանա ՀՀ կառավարության համաֆինանսավորման լրացուցիչ գումարների տրամադրման անհրաժեշտություն, որ կկազմի մոտավորապես 102.3 մլն դրամ՝ հիմնական վարկի գծով և 54.1 մլն դրամ՝ առաջին լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում:

Մինևույն ժամանակ, պայմանավորված 2-րդ լրացուցիչ ֆինանսավորմամբ, որի շրջանակներում պլանավորվում է իրացնել ևս 2.5 մլն ԱՄՆ-ի դոլար, կառաջանա մոտավորապես 104.0 մլն դրամ կազմող ՀՀ կառավարության համաֆինանսավորման մասնաբաժնի լրացուցիչ միջոցների տրամադրման անհրաժեշտություն, որը հարկ կլինի հաշվի առնել ՀՀ 2010 թվականի պետական բյուջեում:

**2. ՀՀ ֆինանսների նախարար Տ.Դավթյանն** անդրադառնալով այդ հարցին, նշեց, որ ներկայումս ՀՄՆՀ-ի գործադիր գրասենյակն իրականացնում է վարկային 2 ծրագիր՝ հիմնական վարկի և առաջին լրացուցիչ ֆինանսավորման գծով: Ներկայացրեց նաև, որ շուտով կստորագրվի նաև միջպետական համաձայնագիր երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման վերաբերյալ, և 2010 թվականի ապրիլ-մայիս ամիսներին այս ծրագիրը ևս կմեկնարկի: Երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում կատարվելիք աշխատանքների մեջ ՀՀ կառավարության մասնաբաժինը կկազմի շուրջ 101.0 մլն դրամ, որը 2010թ. բյուջեում չի

ընդգրկվել, քանի որ միջպետական համաձայնագիր առայժմ չկա: Սակայն, նախարարի կարծիքով, լրացուցիչ գումարների հատկացումը միանգամայն լուծելի հարց է, և որևէ խոչընդոտ չի լինի հիմնադրամի պլանավորած աշխատանքների կատարման համար:

**3. Քննարկումներից հետո որոշվեց** հաստատել ՀՄՆՀ-ի հիմնադրամի 2010 թվականի պլանները, բյուջեն և հաստիքացուցակը:

### 3. Ընթացիկ հարցեր

( Ա.Կիրակոսյան, Տ. Սարգսյան)

**1. Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՄՆՀ-ի գործադիր տնօրեն Ա. Կիրակոսյանը** և խորհրդի անդամներին ներկայացրեց 2-րդ լրացուցիչ ֆինանսավորման վարկային միջոցների օգտագործման համար կիրառվելիք փոփոխությունները, որոնք տեղ կգտնեն լրացուցիչ 2-րդ ֆինանսավորման ընթացակարգերն ամփոփող Ղեկավար ձեռնարկում.

**2. Քննարկումներից հետո որոշվեց ընդունել ի գիտություն** 2-րդ լրացուցիչ ֆինանսավորման վարկային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի համար գործող Ղեկավար ձեռնարկը, որում տեղ են գտնելու հետևյալ ընթացակարգային փոփոխությունները.

1) երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում որևէ միկրոծրագիր չի ֆինանսավորվի Երևան քաղաքում և մարզկենտրոններում.

2) համայնքներում ծրագրերի իրականացման համար համայնքներն ընտրելիս ՀՄՆՀ-ն ծրագրերի համար դրամական միջոցները կբաշխի հետևյալ հարաբերակցությամբ. դրանց 40-60%-ը կօգտագործի խիստ խոցելի համայնքներում, 20-40%-ը` խոցելի համայնքներում, և մինչև 20%-ը` նվազ խոցելի համայնքներում` ծրագրեր իրականացնելու համար.

3) համայնքային ծրագրերի առավելագույն չափը սահմանվում է 130.0 միլիոն դրամ` հիմնական վարկով և 2-րդ լրացուցիչ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի համար.

4) ծրագրի հաստատման համար պահանջվող համայնքի ներդրման չափը որպես կանոն կարող է կազմել ծրագրի արժեքի 5%-ը՝ ի համապատասխան 2-րդ լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում համայնքային ներդրման նվազեցված պահանջին՝ տնտեսական և ֆինանսական ճգնաժամի հետևանքով համայնքների ֆինանսական կարողությունների անկման պատճառով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ  
(ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ)

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՄՆՀ-Ի ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

ԱՇՈՏ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ